# ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅՈՒՐԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

368
Հ-25

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՊԵՏԱՊԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

Թարգմանեց Լ. ՄԻՐԶԱ-ԱՎԱԳՅԱՆ
Պատ. խմբագիր Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տեխ. ձեվ. յեվ սրբ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ

368
Հ-25

Քաղլիտ 449.
Պատվեր 818/487
Տիրաժ 2000

ՌԵԿԼԱՄ-ՀՐԱՏ. ԲՅՈՒՐՈ

Գյուղհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան № 11.

37-Ա
Са 2651
1 MAR 2010

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

*(9 Նոյեմբերի 1936 թ. արձ. № 23, կետ 2)*

Հարցման կարգով

## ՊԵՏԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ընկ. Գրիգորյան)

*Պետապահովագրության գծով 1936 թ. ընթացքում լուծարքված և հատուցված վնասների ճշտությունը ստուգելու նպատակով՝*

*1. 1936 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1937 թ. մարտի 1-ը բոլոր շրջաններում անցկացնել յերրորդ մասսայական ստուգատես։*

*2. Կազմակերպել գյուղխորհուրդներում ստուգատես անցկացնող բրիգադներ հետևյալ կազմով՝ շրջգործկոմի ներկայացուցիչ (բրիգադայի ղեկավար), գյուղային սեկցիայի ներկայացուցիչ, գյուղպետավարկի*

43.861
09 SEP 2013

ոժանդակող հանձնաժողովի ներկայացուցիչ և պետապահովագրական ակտիվից (ահազանգող պոստ, հասարակական տեսուչ և այլն)։

3. Առաջարկել շրջգործկոմներին առանձնացնել իրենց ներկայացուցիչները գյուղերում բրիգադներ կազմակերպելու համար, պարտավորեցնելով բրիգադավարներին տանել կոլտնտեսություններում մասսայական բացատրական աշխատանք ստուգատեսի անցկացման ժամանակ պետապահովագրության օրենքների պարզաբանման, ստուգատեսի նշանակության և անասունների, ցանքսերի կամավոր կարգով գերկոպարային ապահովագրության ուղղությամբ։

4. Ստուգատեսի հաջող կազմակերպման և կամավոր ապահովագրությունների ծավալման գործի ղեկավարությունը դնել շրջանային ֆինբաժնի վարիչների (որպես շրջ. լուծարքային հանձնաժողովի նախագահի) ու շրջգործկոմի նշանակված ներկայացուցիչների վրա մասսայական բնույթ տալով ստուգատեսին, որին մասնակից դարձնել պրոֆմիությունների, կոմյերիտմիության, կոլտնտեսության ակտիվին և այլն։

5. Առաջարկել շրջգործկոմներին՝

ա) Նախագահության նիստերում ամիսը մեկ անգամ շրջ. լուծարքային հանձնաժողովի նախագահի (ֆինբաժվարի) և շրջգործկոմի կողմից նշանակված ներկայացուցիչի զեկուցումները ստուգատեսի ընթացքի մասին, մշակել կոնկրետ ձեռնարկումներ նկատված թերությունները վերացն[illegible]ավելու պլանների



60825-67
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ-Арм ССР

կատարումը ու շրջանային և գյուղական պետապահովագրության լուծարքային հանձնաժողովների աշխատանքները բարելավելու ուղղությամբ։

բ) Պարտավորեցնել շրջանային թերթերի խմբագրություններին հաճախակի նյութեր տպագրել ստուգատեսի ընթացքի, հայտնաբերված թերությունների մասին։

6. Պարտավորեցնել Ֆինժողկոմատին և Պետապի Վարչությանը՝

ա) Անհրաժեշտ հրահանգներ իջեցնել տեղերին ստուգատեսը հաջող անցկացնելու համար։

բ) Ստուգման արդյունքները ներկայացնել Ժողկոմխորհի քննությանը ոչ ուշ մարտի 10-ից։

7. Պարտավորեցնել «Խորհրդային Հայաստան» և «Կոմունիստ» թերթերի խմբագրություններին պարբերաբար նյութեր տպագրել ստուգատեսի անցկացման ընթացքի մասին։

ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահի
տեղակալ՝ ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԽՍՀ Ժողկոմխորհի գործերի կառավարչի
տեկակալ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀՐԱՄԱՆ № 802

(1936 թ. հոկտեմբերի 9-ին)

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅՈՒՐԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ապահովագրական վնասների ճշտության և յուրաժամանակության՝ 1935 թ. վերջում և 1936 թ. սկզբում անցկացված ստուգումը դրսևորել է և հնարավորություն է տվել ուղղելու մի շարք սխալներ, նպաստել է ապահովագրվածների սպասարկման բարելավմանը, ապահովագրական աշխատանքի ամրացմանը գյուղում։

Ապահովագրական աշխատանքի հետագա բարելավման նպատակով հրամայում եմ.—

1. 1936 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1937 թ. մարտի 1-ն ամենուրեք անցկացնել ապահովագրական վնասների ճշտության և յուրաժամանակության 3-րդ մասսայական ստուգում։

2. Պարտավորեցնում եմ ԽՍՀՄ Պետապի Գլխավոր Վարչությանը և ֆինօրգաններին ընդգրկել ստուգմամբ պարտադիր կոպերային ապահովագրության



կյանքի, գերկոպարային և կոլեկտիվ ապահովագրության վճարումները.

3. Դաշնակից և ինքնավար հանրապետությունների ֆինանսների ժողկոմներին, յերկրային, մարզային, շրջանային և քաղաքային ֆինբաժինների վարիչներին, Պետապի հանրապետական, յերկրային և մարզային վարչությունների պետերին՝ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնել, վորպեսզի՝

ա) ստուգումն ընդգրկի առանց բացառության բոլոր գյուղխորհուրդները, կոլտնտեսությունները.

բ) ստուգմանը մասնակից անել հասարակական կազմակերպություններին (պրոֆմիություններ, կոմյերիտ, կոլտնտեսային ակտիվ, ահազանգող ապահովագրական պոստեր, հասարակական տեսուչներ).

գ) ստուգման հետ միասին անմիջապես ուղղել ապահովագրական վնասների լուծարքելու ժամանակ թույլ տրված սխալները.

դ) նպաստել ապահովագրական աշխատանքի ամրացմանը գյուղում, ուժեղացնել պայքարն անտնտեսավարության հետևանքով առաջացած վնասների ամեն տեսակի ապօրինի վճարումների դեմ, ինչպես նաև քաշքշուկի ու ապահովագրական վարձատրություն տալու մասին առաջադրված օրինական պահանջներն անհիմն կերպով մերժելու դեմ.

ե) դրսևորել դեպի կոլտնտեսային գույքը անտնտեսվար վերաբերմունք ունենալու դեպքերը և ուժեղացնել սոցիալիստական սեփականության պաշտպանությունը.

գ) ստուգման ընթացքն ու արդյունքները լայնորեն լուսաբանել տեղական մամուլում և զեկուցել գործկոմներին։

4. ԽՍՀՄ Պետապի Գլխավոր Վարչությանը՝ հատուկ ֆոնդ սահմանել 300,000 ռ. չափով պարգևատրելու համար այն ակտիվիստ—կոլտնտեսականներին, ուսուցիչներին և գյուղական այլ ակտիվիստներին, վորոնք աշխատանքի լավագույն ցուցանիշներ կունենան գյուղի ապահովագրական գործի ստուգման և խեղաթյուրումների ու սխալների վերացման բնագավառում։

5. ԽՍՀՄ Պետապի Գլխավոր Վարչությանը՝ 1936 թ. նոյեմբերի 15-ից վոչ ուշ գործնական ցուցումներ տալ տեղերին 3-րդ մասսայական ստուգում անցկացնելու կարգի մասին՝ կազմակերպելով կոնտրոլ դրանց կատարման վրա։

6. «Էկոնոմիչեսկայա Ժիզն» թերթի խմբագրությանը՝ 3-րդ մասսայական ստուգման ժամանակաշրջանում լուսաբանել թերթում այդ աշխատանքի ընթացքը։

ԽՍՀՄ Ֆինժողկոմի տեղակալ՝ ԱԲՈԼԻՆ



## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅՈՒՐԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Վնասների վճարման ճշտության և յուրաժամանակության ստուգումը, վորը կատարվել է 1935 թ. վերջում և 1936 թ. սկզբում ցույց է տվել, վոր այդ ձեռնարկումը խոշոր նշանակություն ունի։ Ստուգման շնորհիվ պարզվել է, վոր անհիմն կերպով վնասներ հատուցելը մերժելու 19 հազ. դեպքեր են յեղել 4.900 հազ. ռ. գումարով, 5000-ից ավելի ապօրինի կերպով ապահովագրական վարձատրություն վճարելու դեպքեր 1 միլ. ռուբ. գումարով և ապահովագրված գույքի, ցանքերի և անասունների կորստի փաստեր ծածկելու 148 հազ. դեպք։

Ստուգումը դրական ազդեցություն է ունեցել նաև ապահովագրության կամավոր տեսակների զարգացման վրա։

ԽՍՀՄ Ժողկոմխորհն իր ս/թ սեպտեմբերի 5-ի վորոշման մեջ նշել է, վոր պետական ապահովագրությունը շարունակում է զգալիորեն հետ մնալ այն խնդիրներից, վորոնք դրված են նրա առաջ ԽՍՀՄ

ժողկոմխորհի և Համ. Կ. (բ) Կենտկոմի 1933 թ. մարտի 8-ի վորոշմամբ, մանավանդ, գյուղի աշխատանքի բնագավառում. Պետապահովագրության մասսայական բացատրական աշխատանքը անբավարար է։

Ապահովագրական վճարների վճարման ճշտության 3-րդ մասսայական ստուգումը և ապահովագրության վերաբերյալ խորհրդային որենքների բոլոր հայտաբերված խախտումների վերացումը անշուշտ կնպաստեն պետապահովագրության հեղինակության բարձրացմանը, յուրաքանչյուր աշխատավորի վստահելի պաշտպանը կդարձնեն նրան դժբախտ պատահարների, հրդեհների, անասունների անկման դեպքում և այլն։

## ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԽՍՀՄ Ֆինանսների ժողկոմի տեղակալ ընկ. ԱԲՈԼԻՆԻ ս/թ. հոկտեմբերի 9-ի հրամանի համաձայն ստուգումը պետք է անց կացնել յերեք ամսվա ընթացքում՝ 1936 թ. դեկտեմբերին, 1937 թ. հունվարին և փետրվարին։ Պետապի վարչությունները այնպես պետք է կազմակերպեն ստուգման աշխատանքները, վոր պեսզի ճշտորեն պահպանված լինի այդ ժամկետը և վոչ մի հապաղում այդ աշխատանքի կատարման գործում թույլ տրված չլինի։ Ստուգման յենթակա յեն վոչ միայն պարտադիր կոպարային ապահովագրության վճարները, այլ և կամավոր գերկոպարային ապահովագրության ուկոլլեկտիվ ապահովագրության



վճարները։ Պետք է ստուգել 1936 թ. հունվարի 1-ից հետո կազմված բոլոր ակտերը։

Ստուգման աշխատանքը պետք է կատարել խըստորեն ըստ պլանի։

Շրջանային ապահովագրական տեսչությունները պետք է նախատեսնեն իրենց պլաններում գյուղխորհուրդներում և կոլտնտեսություններում ստուգում անցկացնելու ժամկետները, շրջանային ապահովագրական հանձնաժողովների կողմից գյուղական ստուգող բրիգադների ղեկավարների զեկուցումների քննելու ժամկետները, գյուղական ստուգող բրիգադների նյութերը քննելու համար շրջանային ապահովագրական հանձնաժողովի նիստեր գումարելու թվակիրը, շրջանային ապահովագրական հանձնաժողովի և ապահովագրական տեսչության կողմից շրջգործկոմում և Համ. Կ(բ)Կ Շրջկոմում զեկուցումներ տալու թվակերերը։

Առանձնապես հատուկ պետք է կազմակերպված լինի ստուգման ընթացքի վերաբերյալ ինֆորմացիոն աշխատանքը։ Այս պայմանով միայն կարելի յե կամպանիան անցկացնել ոպերատիվորեն և ժամկետին, աշխատանքի պրոցեսում արագ կերպով ուղղելով կազմակերպչական առանձին թերությունները։

## Ա. ՊԵՏԱՊԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պետապի վարչությունների հիմնական խնդիրները վճարումների ստուգման կազմակերպման գործում հետևյալներն են.—

1. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ամենակարճ ժամանակում հանրապետության Ժողկոմխորհը վորոշում կայացնի ստուգում անցկացնելու մասին։ Անհրաժեշտ է պնդել, վորպեսզի գործկոմները գյուղական ստուգող բրիգադների աշխատանքի ղեկավարությունը դնեն շրջգործկոմների հատուկ լիազորների վրա։

2. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ստուգմանը մասնակից արվեն կոմյերիտը, պրոֆմիությունները, մամուլը և ֆինանսական ու ապահովագրական որգանների շեֆությունն իրենց վրա վերցրած ֆաբրիկաներն ու գործարանները։

3. Կամպանիայի ամբողջ ընթացքում օպերատիվորեն հետևել ստուգման ընթացքին տեղերում, անհրաժեշտ գործնական օգնություն ցույց տալով նրանց ստուգում կազմակերպելու և այդ ստուգման ընթացքի վրա հսկելու գործում։ Անմիջապես կտրուկ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի տույժի յենթարկվեն այն շրջֆինբաժինների վարիչներն ու ապահովագրական տեսուչները, վորոնք հետ են մնում ստուգում անցկացնելու բնագավառում ու անգործության են մատնված։

4. ԽՍՀՄ Ֆինժողկոմատի հրամանի համաձայն ապահովել, վորպեսզի ստուգման ժամանակ անմիջապես ուղղվեն թույլ տրված սխալները։

5. Ցուցումներ տալ բոլոր շրջաններին այն մասին, վոր անհրաժեշտ է հայտնաբերել ստուգման ժամանակ այն անձանց, վորոնք մեղավոր են քաշքշուկի անտնտեսվարության և վնասներ թաքցնելու մեջ, միջոցներ ձեռք առնելով նրանց պատժելու համար։



Մանրազնին ստուգել այդ ցուցումների կատարումը ստուգման արդյունքները շրջաններում ընդունելու ժամանակ։

6. Կազմակերպել տեղերից ստուգման ընթացքի մասին ժամանակին գրավոր ինֆորմացիաներ ստանալու գործը և դրանց հիման վրա ապահովելու ժամանակին ինֆորմացիոն զեկուցումներ կենտրոնին ներկայացնելը։

7. Կազմակերպել ստուգում անցկացնելու փորձի փոխանակում շրջանների միջև։

8. Կազմակերպել ստուգման աշխատանքների ընդունում վոչ պակաս քան շրջանների 50$^0/_0$-ում։ Առաջին հերթին և ամենից մանրազնին աշխատանքի ընդունում կատարել այն շրջաններում, վորտեղ ստուգման ժամանակ ամենից քիչ սխալներ և անկանոնություններ են հայտնաբերված յեղել, կամ բոլորովին հայտնաբերված չեն յեղել։

9. Ինքնաստուգման, գյուղական բրիգադների վատ աշխատանքի փաստեր հայտնաբերելու դեպքում (յեթե տնտեսությունները չեն շրջել, վնասներ թաքցնելու դեպքեր չեն հայտնաբերվել, բրիգադների նյութերը չեն քննվել կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում և այլն) պետք է չեղյալ համարել ստուգումը, անմիջապես տեղեկացնելով այդ մասին շրջանային դիրեկտիվ կազմակերպություններին և աշխատել, վորպեսզի նրանք վորոշում կայացնեն կարճ ժամանակամիջոցում կրկնակի ստուգում անցկացնելու մասին։

10. Կազմակերպել ապահովագրական ապարատ

լավագույն աշխատողների և մանավանդ ակտիվիստ-կոլտնտեսականների, բանվորների, ուսուցիչների և գյուղական այլ ակտիվիստների պարգևատրման գործն ստուգման և ապահովագրական աշխատանքում յեղած սխալների ուղղման բնագավառում լավագույն նվաճումներ ունենալու համար։

## Բ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Շրջանային ապահովագրական տեսչությունների և շրջանային ապահովագրական հանձնաժողովների վրա դրվում են հետևյալ խնդիրները.—

1. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի շրջգործկոմները վորոշում կայացնեն ստուգում անցկացնելու կարգի և ժամկետների, ինչպես նաև գյուղական ստուգող բրիգադների աշխատանքը ղեկավարելու համար շրջգործկոմի լիազորներ նշանակելու մասին։

2. Ապահովագրական տեսուչները մինչ ստուգում սկսելը պետք է կազմեն յուրաքանչյուր գյուղխորհրդի ապահովագրական ակտերի ցուցակ գյուղական ստուգող բրիգադների համար։ Վնասների վերաբերյալ ակտերն ստուգող բրիգադներին հանձնելը կատեգորիկ կերպով արգելվում է։

3. Կազմակերպել գյուղական ստուգող բրիգադներ այնպիսի քանակությամբ, վորն անհրաժեշտ է, վորպեսզի յերեք ամսվա ընթացքում կարելի լինի



լրիվ ստուգել բոլոր ակտերով ապահովագրական վարձատրության վճարման ճշտությունն ու յուրաժամանակությունը։

4. Մանրազննին հրահանգել ստուգող բրիգադների համար նշանակված շրջանային և գյուղական աշխատողներին, կազմակերպելով նրանց համար կարճատև սեմինարներ և մանրամասն հրահանգներ տալ պետապահովագրության խնդիրների և նշանակության, ակտեր կազմելու, դրանց հաստատման, դրամ վճարելու կարգի ու ժամկետի մասին և այլն։

5. Ապահովել, վորպեսզի շրջգործկոմների լիազորներն անպայման կազմակերպեն տարբերային ագենտներից տուժած տնտեսությունների շրջագայություն, տեղում ստուգելու համար փաստերի վճարման ճշտությունը։

6. Ստուգում կատարել նաև այն գյուղխորհուրդներում, վորտեղ 1936 թ. ընթացքում վոչ մի ակտ կազմված չի յեղել (այդ անհրաժեշտ է թաքցրված փաստեր հայտաբերելու համար)։

7. Յուրաքանչյուր տասնորյակում գումարել շրջանային ապահովագրական հանձնաժողովի նիստ գյուղական ստուգող բրիգադների նյութերը քննելու համար։

8. Վոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում ապահովագրական վարձատրություն վճարել այն ակտերով, վորոնցով մինչ այդ փաստ հաստատելն ապորինի կերպով մերժված է յեղել, ինչպես նաև բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի վոչ ուշ, քան մեկ ամսում գանձվեն սխալ վճարված գումարները (յեթե շրջանա-

յին ապահովագրական հանձնաժողովը վորոշում ունի այդ առթիվ)։

9. Ստուգման ընթացքում կատարել բոլոր կոլտնտեսություններում ապահովագրված գույքի հասարակական ստուգատես, նրա պաշտպանությունն ու շահագործումը բարելավելու նպատակով։ Դեպի հանրային սեփականությունն անտնտեսվար, անփույթ վերաբերմունք հայտաբերելու դեպքում կոլտնտեսության վարչության, գյուղխորհրդի, ՄՏԿ, շրջհողբաժնի միջոցով անմիջապես վերացնել այդ, իսկ անհրաժեշտ դեպքերում դադարեցնել ապահովագրությունը (մինչև գույքը կարգի բերելը)։

10. Ց. Բ. Ա. Միության շրջանային(քաղաքային) կոմիտեյի և աջակցող կոմիտեների օգնությամբ հատուկ բրիգադներ կազմակերպել կյանքի կոլեկտիվ ապահովագրության ապահովագրական վարձատրության վճարման ճշտությունն ստուգելու համար։

11. Աշխատել, վորպեսզի շրջգործկոմի նախագահության կամ Համ. Կ(բ)Կ շրջկոմի բյուրոյի նիստերում քննվեն զեկուցումներ ստուգման արդյունքների մասին։

## Դ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՂ ԲՐԻԳԱԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գյուղական ստուգող բրիգադները կազմվում են գյուղական ապահովագրական ակտիվից, հասարակական տեսուչներից, կոմյերիտմիության, պրոֆմիությունների ներկայացուցիչներից։ Գյուղական ստուգող



բրիգադները, գյուղխորհրդում և կոլտնտեսության մեջ անմիջականորեն անց են կացնում վնասների վճարման ճշտությունն ստուգելու վողջ աշխատանքը։ Գյուղական ստուգող բրիգադի վրա դրվում են հետևյալ խնդիրները։

1. Ստանալ շրջանային ապահովագրական տեսուչից ստուգվելիք ապահովագրական ակտերի ցուցակը։

2. Նայել 1936 թ. վնասների վերաբերյալ ակտերի ռեեստրներն (մատյանները) ու շրջանային ապահովագրական հանձնաժողովի արձանագրությունները այն գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների, վորտեղ գյուղական ստուգող բրիգադն աշխատանք պետք է կատարի։

3. Աշխատանքի սկզբում բրիգադավարը, վորը ղեկավարում է ստուգող բրիգադի աշխատանքները, պարտավոր է կոլտնտեսականների ընդհանուր ժողով գումարել և ծանոթացնել ներկա գտնվողներին վնասների վճարման ստուգում անցկացնելու նպատակներին, խնդիրներին և կարգին, կոչ անելով կոլտնտեսականներին՝ տեղեկացնել ապահովագրական աշխատանքների մեջ թույլ տրված հեղափոխական օրինականության խախտման իրենց հայտնի բոլոր դեպքերի մասին։

4. Ստուգման ժամանակ պարզել ապահովագրված գույքի փչացման կամ վնասման իսկական պատճառները, վորի համար պետք է՝ ա) շրջել տարերային աղետներից տուժած բոլոր տնտեսությունները, բ) հարցաքննել ապահովագրվողներին, վկաներին, անասնաբուժական և հրդեհաշեջ աշխատողներին, գյուղատնտեսա-

ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна

ներին, ապահովագրական ակտիվիստներին, բրիգադավարներին, հովիվներին, անասնապահներին, ախոռապաններին և այլ անձանց, վորոնք կարող են արժեքավոր ցուցմունքներ տալ ինչպես վնասի պատճառների մասին, նույնպես և առհասարակ այն մասին, թե ինչպես է վարում ապահովագրվողն իր տնտեսությունը:

5. Գույքի կորստի իսկական պատճառները պարզելու հետ միաժամանակ պետք է ճշտորեն վորոշել յուրաքանչյուր վնասի լուծարման և վճարման յուրաժամանակությունը:

6. Հայտաբերել անասունների անկման, հրդեհների, ցանքերի փչացման այն բոլոր դեպքերը, վորոնց առթիվ ապահովագրական ակտեր կազմված չեն յեղել և վնասների մասին չի հայտնվել շրջանային ապահովագրական տեսչությանը:

7. Կազմել ակտ գյուղխորհրդում և կոլտնտեսության մեջ կատարված ստուգման արդյունքների մասին, տալով յեզրակացություն յուրաքանչյուր ակտի վերաբերյալ:

8. Վնասների վճարման ճշտությունն ստուգելու հետ միասին գյուղական ստուգող բրիգադները պետք է կոլտնտեսային ապահովագրված գույքի դրության ստուգատես անցկացնեն, մանավանդ այն կոլտնտեսություններում, վորտեղ 1936 թ. գյուղատնտեսական անասունների հաճախակի անկում է նկատվել կամ հաճախակի հրդեհներ: Գյուղական ստուգող բրիգադը պետք է ստուգի, թե ինչպես է դրված անասունների



խնամքը, կերակրումը, շահագործումը, պահպանվում են արդյոք անասնաբուժական-սանիտարական կանոնները, ինչպես է դրված հակահրդեհային պաշտպանությունը և այլն: Ապահովագրված գույքի մասին բրիգադն ակտ է կազմում 2 որինակից, վորից մեկը մնում է կոլտնտեսությունում, իսկ մյուսն ուղարկվում է շրջանային ապահովագրական տեսչությանը:

9. Կյանքի կոլեկտիվ ապահովագրության վնասների վճարման ճշտությունը (և վնասի մերժելու ճշտությունը) ստուգելիս, հատուկ նշանակված բրիգադները պետք է շրջեն այն ձեռնարկությունները ու հիմնարկները, վորտեղ աշխատել են ապահովագրվողները, ստուգեն թե արդյոք ժամանակին նրանք վճարել են ապահովագրական մուծումները, ստուգել գանձողների և լիազորների աշխատանքը, այցելել ապահովագրվածների այն ընտանիքները, վորոնք նպաստ են ստացել, մանրազնին պարզեն վնասի մերժելու որինականությունը:

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ստուգման աշխատանքի հաջողության անհրաժեշտ պայմանը դրա շուրջը լայն մասսայական աշխատանք ծավալելն է հանդիսանում: Պետք է հասնել այնպիսի դրության, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսական իմանա վնասների վճարման ստուգում անցկացնելու և այդ ձեռնարկման նշանակության մասին:

Միջոցներ պետք է ձեռք առնել, որպեսզի շրջանային թերթերում լուսաբանվի ստուգման ընթացքը։

Որպես մասսայական աշխատանք կարելի է առաջարկել.—

ա) ռադիոկանչեր կազմակերպելը.

բ) ցուցահանդեսներ, տեղեկատու սեղաններ, հասարակական վայրերում (ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում, կարմիր անկյուններում) ապահովագրական կոնսուլտացիաներ կազմակերպելը։

գ) շարժական կինոների օգտագործումը.

դ) սոցմրցումը շրջանային և գյուղական ստուգող բրիգադների միջև լավագույն կերպով ստուգում անցկացնելու համար.

ե) ստուգումը մասսայականացնելու համար ՄՏ կայանների բազմատիրաժներն ու կոլտնտեսային պատի թերթերի օգտագործելը.

զ) գյուղխորհուրդների պլենումներում և կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում գյուղական ստուգող բրիգադների ղեկավարների հաշվետու զեկուցումներ լսելը,

է) ստուգման նպատակների և խնդիրների մասին լոզունգներ և թռուցիկներ հրապարակելը։

## ԻՆՖՈՐՄԱՑԻԱ

Գյուղական ստուգող բրիգադները յուրաքանչյուր գյուղխորհրդում ստուգումն ավարտելուց հետո շրջանային ապահովագրական հանձնաժողովին ուղարկում են իրենց յեզրակացությունները ու առաջարկները։

Ամսական յերկու անգամ շրջանային ապահովագրական հանձնաժողովը գյուղական ստուգող բրիգադներից ստացած նյութերն ամփոփում է և ինֆորմացիա ուղարկում Պետապի հանրապետական վարչությանը կցված ձևով։

Այդ ինֆորմացիաները շրջանային ապահովագրական տեսուչները պետք է ուղարկեն Պետապի վարչությանը յուրաքանչյուր ամսվա 10-ին և 25-ին։

ԽՍՀՄ Պետապի Գլխ. Վարչության պետի
տեղակալ՝ ՌԱԲԻՆՈՎԻՉ

Կազմ. Տեսչ. բաժնի վարիչ՝ ՄԵՏԵԼԿԻՆ

ՀՍՍՌ-Arm CCP
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0225365

7 61
43.861